

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության՝ «Հայաստանի Հանրապետության 2008 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ» տարեկան հաշվետվության մասին

Ուսումնասիրության հիմքը՝ ՀՀ վերահսկիչ պալատի 2009 թվականի տարեկան ծրագիրը, «Վերահսկիչ պալատի մասին» և «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքները:

Ուսումնասիրության նպատակը՝ «ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ» ՀՀ կառավարության հաշվետվության (այսուհետ՝ Հաշվետվություն) համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը:

Ուսումնասիրության օբյեկտները՝ ՀՀ ֆինանսների նախարարություն, գանձապետական համակարգ:

Ուսումնասիրության ժամանակահատվածը՝ 01.05.2009թ.-ից մինչև 20.05.2009թ.-ը:

Ուսումնասիրությունը կատարվել է հետևյալ փաստաթղթերի հիման վրա՝ «ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ» ՀՀ կառավարության հաշվետվություն, «ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի մասին» (այսուհետ՝ Օրենք), «ՀՀ բյուջետային համակարգի մասին», «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենքներ, 2008 թվականի հունվարի 21-ի «ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» ՀՀ կառավարության թիվ 1540-Ն որոշում, ՀՀ կառավարության 2002 թվականի հունիսի 18-ի «Հայաստանի Հանրապետության պետական և համայնքային բյուջեների կատարման կարգը հաստատելու մասին» թիվ 48 որոշում, բյուջեի կատարման վերաբերյալ ՀՀ կառավարության որոշումներ, ինչպես նաև այլ իրավական ակտեր:

2008 թվականի ՀՀ պետական բյուջեի ամփոփ ցուցանիշները

Համաձայն ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ ՀՀ կառավարության հաշվետվության (այսուհետ՝ Հաշվետվություն), ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի եկամուտները «ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ Օրենք) նախատեսվել է 746,005,467.5 հազ. դրամ: 2008 թվականի ընթացքում պետական բյուջեի եկամուտները ՀՀ կառավարության որոշումներով

ավելացել է 57,658.517.7 հազ. դրամով, և արդյունքում՝ ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի եկամուտների ճշտված ծրագիրը կազմել է 803,663,985.2 հազ. դրամ:

Համաձայն Օրենքի 9-րդ հոդվածի 18 կետի, արտաբյուջետային միջոցների որոշ հաշիվների մուտքերի և ելքերի նախահաշվային և փաստացի ցուցանիշները ներառվում են ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի կատարման հաշվետվությունում և արտացոլվում են որպես պետական բյուջեի համապատասխան մուտքեր և ելքեր: Հաշվետվությունում ՀՀ 2008 թվականի պետական հիմնարկների արտաբյուջետային միջոցների հաշիվներում մուտքերը տարեսկզբին հաստատված տարեկան նախահաշվով նախատեսվել էր 15,960,083.50 հազ. դրամ, ճշտված ծրագրով կազմել է 98,712,531.2 հազ. դրամ, որից՝ 30,097,901.1 հազ. դրամը դիտարկվող ժամանակահատվածում ստացվող եկամուտների 2,924,754.2 հազ. դրամը արտաբյուջետային միջոցների՝ դիտարկվող ժամանակահատվածի սկզբի ազատ մնացորդը, իսկ 65,689,875.9 հազ. դրամը՝ ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերն են: Արտաբյուջետային միջոցների հաշիվներում փաստացի մուտք է եղել 98,326,274.65 հազ. դրամի գումար, որից՝ 29,646,025.8 հազ. դրամը դիտարկվող ժամանակահատվածում փաստացի ստացված եկամուտներն են, 2,934,613.65 հազ. դրամը՝ արտաբյուջետային միջոցների՝ դիտարկվող ժամանակահատվածի սկզբի ազատ մնացորդը, իսկ 65,745,635.2 հազ. դրամը՝ ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերն են:

ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի եկամուտներն, առանց արտաբյուջետային միջոցների, փաստացի կազմել է 755,709,006.0 հազ. դրամ կամ Օրենքով նախատեսված ցուցանիշի նկատմամբ՝ 101.3%, ճշտված ծրագրի (առանց արտաբյուջետային միջոցների) նկատմամբ՝ 97.7%, իսկ ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի եկամուտները, ներառյալ՝ արտաբյուջետային միջոցները, փաստացի կազմել է 785,355,031.8 հազ. դրամ կամ Օրենքով նախատեսված ցուցանիշի 105.3%-ը, ճշտված ծրագրի՝ 97.72%-ը: 2008 թվականի պետական բյուջեի փաստացի եկամուտները ՀՆԱ-ի (3,650,049,800.0 հազ. դրամ) նկատմամբ կազմել են 21.52 % (2007թ.՝ 21.37%):

Օրենքով ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի ընդամենը ծախսերը նախատեսվել է 822,054,378.3 հազ. դրամ, 2008 թվականի ընթացքում ՀՀ կառավարության որոշումներով ավելացել է 38,582,585.4 հազ. դրամով, և դրա արդյունքում ծախսերի ճշտված ծրագիրը (ներառյալ՝ 17,346,188.1 հազ. դրամ արտաբյուջետային միջոցների հաշիվն կատարվող ծախսը) կազմել է 860,636,963.7 հազ. դրամ, իսկ ծախսերի ճշտված ծրագիրը (առանց արտաբյուջետային միջոցների հաշիվն կատարվող ծախսի) կազմել է 843,290,775.6 հազ. դրամ: Ընդամենը փաստացի ծախսերը (ներառյալ՝ 13,664,332.4 հազ. դրամ փաստացի արտաբյուջետային ծախսերը) կազմել են 810,574,523.8 հազ. դրամ կամ Օրենքով

նախատեսվածի 98.6%-ը, ճշտված ծրագրի՝ 94.18%-ը: 2008 թվականի պետական բյուջեի փաստացի ծախսերը ՀՆԱ-ի նկատմամբ կազմել են 22.21 % (2007թ.՝ 22.03%):

Օրենքով ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի պակասուրդը հաստատվել է 76,048,910.8 հազ. դրամ, որը տարվա ընթացքում պակասեցվել է 19,075,932.3 հազ. դրամով, այսինքն՝ ճշտված ծրագիրը կազմել է 56,972,978.5 հազար դրամ: ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի կատարման արդյունքում գրանցվել է 25,219,492.0 հազ. դրամի պակասուրդ, որը կազմել է Օրենքով նախատեսվածի 33.16%-ը, իսկ տարեկան ճշտված ծրագրով՝ նախատեսվածի 44.27%-ը: 2008 թվականի պետական բյուջեի պակասուրդի փաստացի ցուցանիշը ՀՆԱ-ի նկատմամբ կազմել է 0.69% (2007թ.՝ 0.67%):

2002-2007 թվականների ՀՀ պետական բյուջեների մասին ՀՀ Օրենքներում կատարված վերլուծության արդյունքում առկա է ՀՀ կառավարությանը փոխանցած լիազորությունների ընդլայնում, որի արդյունքում 2008 թվականի ՀՀ կառավարությանը լրացուցիչ եկամուտների և ներգրավված միջոցների առկայության դեպքում իրականացնել լրացուցիչ ծախսերի բաշխում:

2008 թվականի պետական բյուջեի եկամուտների վերաբերյալ

2008 թվականին պետական բյուջեի փաստացի եկամուտները կազմել են 785,355,031.8 հազ. դրամ (ներառյալ՝ արտաբյուջետային եկամուտները), սակայն 2008 թվականի արդյունքները 2007 թվականի հետ համեմատելու համար անհրաժեշտ է համադրելի դարձնել: 2008 թվականին բյուջեի փաստացի եկամուտները 2007 թվականի համեմատ աճել են 112,639,059.0 հազ. դրամով կամ 16.7%-ով, իսկ առանց 2008 թվականի արտաբյուջետային եկամուտների, աճը կկազմի 95,069,075.7 հազ. դրամ կամ 14.39%: 2008 թվականի ՀՆԱ-ի նկատմամբ պետական բյուջեի փաստացի եկամուտների հարաբերակցությունը, ներառյալ՝ արտաբյուջետային եկամուտները, կազմել է 21.51 %, 2007 թվականի 21.37%-ի փոխարեն, այսինքն՝ աճել է 0.14% տոկոսային կետով:

Ըստ Հաշվետվության, 2008 թվականի պետական բյուջեի փաստացի եկամուտների կառուցվածքում, հարկային եկամուտները կազմել են 76.2%, առանց արտաբյուջետային հաշիվների եկամուտների՝ 79.1%, պետական տուրքերը՝ համապատասխանաբար՝ 2.8% և 3.0%, պարտադիր սոցիալական ապահովության վճարները՝ համապատասխանաբար՝ 13.4% և 13.9%, պաշտոնական տրանսֆերտները՝ համապատասխանաբար՝ 1.9% և 1.9% և այլ եկամուտները համապատասխանաբար՝ 5.6% և 2.1%:

ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի փաստացի հարկային եկամուտները (ներառյալ՝ արտաբյուջետային եկամուտները) Օրենքով նախատեսվածից 23,703,726,3

հազ. դրամով (այդ թվում՝ 1,191,182.3 հազ. դրամ արտաբյուջետային հարկային եկամուտներ) կամ 4.12%-ով ավելի է մուտքագրվել, որի արդյունքում փաստացի հարկային եկամուտները կազմել են 598,794,297.3 հազ. դրամ՝ ապահովելով ճշտված տարեկան ծրագրի 100.3% կատարում: Իսկ առանց արտաբյուջետային եկամուտների 2008 թվականի պետական բյուջեի հարկային եկամուտները կազմել են 597,603,115.02 հազ. դրամ, որի կատարողականը Օրենքով հաստատված ցուցանիշի նկատմամբ կազմել է 103.9%, իսկ ճշտված ծրագրի նկատմամբ՝ 100.4%: 2008 թվականի պետական բյուջեի փաստացի հարկային եկամուտները ՀՆԱ-ի նկատմամբ կազմել են 16.4%, նախորդ տարվա 16.0%-ի համեմատ: 2008 թվականին հարկային եկամուտները կազմել է փաստացի եկամուտների 76.26%-ը:

2008 թվականին պետական բյուջե է մուտքագրվել 22,299,362.0 հազ. դրամի պետական տուրք, որը ճշտված ծրագրի նկատմամբ կազմել է 98.2%, իսկ Օրենքով հաստատվածի նկատմամբ՝ 101.2%: 2008 թվականին պետական տուրքը կազմել է փաստացի եկամուտների 2.84%-ը:

2008 թվականին պարտադիր սոցիալական ապահովության վճարները Օրենքով նախատեսվել են 104,902,145.0 հազ. դրամ, փաստացի ցուցանիշը կատարվել է 99,261.4 հազ. դրամով ավելի և կազմել է 105,001,406.4 հազ. դրամ, կամ կատարվել է 100.1%-ով: 2008 թվականին պարտադիր սոցիալական ապահովության վճարները կազմել է փաստացի եկամուտների 13.37%-ը:

2008 թվականին պետական բյուջեի պաշտոնական տրանսֆերտները Օրենքով նախատեսվել են 34,927,061.5 հազ. դրամ, ճշտված ծրագրով՝ 38,978,862.3 հազ. դրամ, փաստացի ցուցանիշը կատարվել է 14,975,910.6 հազ. դրամով, կամ Օրենքով նախատեսվածի 42.9%-ը, ճշտված ծրագրի 38.4%-ը: Առանց արտաբյուջետային եկամուտների, փաստացի պաշտոնական տրանսֆերտները կազմել են 14,714,842.38 հազ. դրամ, որի կատարողականը Օրենքով հաստատվածի նկատմամբ կազմել է 42.1%, իսկ ճշտված ծրագրի (առանց արտաբյուջետային եկամուտների) նկատմամբ՝ 37.94%: 2008 թվականին պաշտոնական տրանսֆերտները կազմել է փաստացի եկամուտների 1.90%-ը:

2008 թվականին պետական բյուջեի այլ եկամուտները Օրենքով նախատեսվել են 9,041,771.0 հազ. դրամ, ճշտված ծրագրով՝ 40,161,604.3 հազ. դրամ, փաստացի ցուցանիշը կատարվել է 44,284,055.5 հազ. դրամով, կամ Օրենքով նախատեսվածի 489.8%-ը, ճշտված ծրագրի 110.3%-ը: Առանց արտաբյուջետային եկամուտների, փաստացի այլ եկամուտները կազմել են 16,090,280.19 հազ. դրամ, որի կատարողականը Օրենքով հաստատվածի նկատմամբ կազմել է 177.95%, իսկ ճշտված ծրագրի (առանց

արտաբյուջետային եկամուտների) նկատմամբ՝ 134.83%: 2008 թվականին այլ եկամուտները կազմել է փաստացի եկամուտների 5.64%-ը:

Հաշվետվությունում բացակայում է ըստ եկամտատեսակների ճշտված պլանին և կատարողականին վերաբերող տվյալները, որը հնարավորություն չի ընձեռում հիմնավոր վերլուծություն իրականացնելու համար: Վերահսկիչ պալատի կարծիքով, անհրաժեշտ է, որ «ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածում նախատեսել եկամուտները՝ ըստ եկամտատեսակների, մասնավորապես՝ հարկային եկամուտները՝ ըստ եկամտատեսակների:

2008 թվականի պետական բյուջեի ծախսերի վերաբերյալ

Ըստ Հաշվետվության, ընդամենը փաստացի ծախսերը (ներառյալ՝ 13,664,332.4 հազ. դրամ փաստացի արտաբյուջետային ծախսերը) կազմել են 810,574,523.8 հազ. դրամ, որը Օրենքով նախատեսվածի 98.6%-ը, ճշտված ծրագրի՝ 94.18%-ն է:

ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի ծրագրերի (գործառնական դասակարգմամբ) կատարման ուսումնասիրությամբ պարզվել է՝

1. թվով տասներեք ծրագրեր, որոնց ընդհանուր գումարը ճշտված ծրագրերով նախատեսվել է՝ 4,358,517.4 հազ. դրամ, չի կատարվել, այսինքն՝ վճարումներ չեն իրականացվել:
2. թվով տասներեք ծախսային ծրագրերով փաստացի ծախսեր՝ 27,633,700.5 հազ. դրամ, ճշտված ծրագրով նախատեսվածից ավելի ծախս է կատարվել՝ 3,315,282.6 հազ. դրամի չափով:
3. թվով երեսունչորս ծախսային ծրագրերով (այդ թվում՝ քսանմեկը՝ արտաքին վարկային և դրամաշնորհային ծրագրեր են) փաստացի կատարողականը ճշտված ծրագրի նկատմամբ կատարվել է 50%-ից ցածր: Այդ ծրագրերի ճշտված ծրագրային ցուցանիշը կազմել է 38,447,896.1 հազ. դրամ, մինչդեռ փաստացի կատարողականը կազմել է 11,579,164.6 հազ. դրամ կամ ճշտված ծրագրի 30.1%-ը: Պետք է նշել, որ նախատեսվածից ցածր կատարողական ունեցող ծրագրերում գումարային արտահայտությամբ ամենամեծ կատարողական է արձանագրվել ԱՄՆ կառավարության աջակցությամբ իրականացվող Հայաստանի Հանրապետությանը տրամադրվող «Հազարամյակի մարտահրավեր» դրամաշնորհային ծրագրերում՝ 14,717,604.4 հազ. դրամ (4020413 ծրագրով՝ 5,938,858.2 հազ. դրամ և 4050110 ծրագրով՝ 8,778,746.2 հազ. դրամ):

4. 2008 թվականի ընթացքում նախատեսված 2,512,720.9 հազ. դրամ գումարի չափով ինը ծախսային ծրագրեր տարեկան ծրագրի ճշտման արդյունքում գրոյացվել են:
5. թվով քսանմեկ ծախսային ծրագրեր Օրենքով նախատեսված չեն եղել, սակայն կառավարությանը վերապահված լիազորությունների շրջանակներում ճշտված ծրագրով նախատեսվել են 9,130,954.3 հազ. դրամ (առանց արտաբյուջեի), իսկ փաստացի կատարվել են 9,054,752.9 հազ. դրամ կամ ճշտված ծրագրի 99.17%-ով: Այդ քսանմեկ ծրագրերից ութը դրամաշնորհային ծրագրեր են, որոնց փաստացի ծախսը կազմել է 3,818,035.8 հազ. դրամ և մեկ՝ վարկային ծրագիր՝ 112,788.0 հազ. դրամ փաստացի ծախսով,
6. 2008 թվականի ընթացքում կատարված ծախսերի կառուցվածքը հետևյալն է՝ 26,2%-ը ուղղվել է սոցիալական պաշտպանությանը, 14,9%-ը՝ պաշտպանությանը, 12,9%-ը ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների, 12,8%-ը՝ կրթությանը, 11,0%-ը՝ տնտեսական հարաբերություններին, 7,6%-ը՝ հասարակական կարգի անվտանգությանը և դատական գործունեությանը, 6,2%-ը՝ առողջապահությանը, 2%-ը՝ հանգիստ, մշակույթ և կրոն բաժնին, 1,7%-ը՝ բնակարանային շինարարությանը և կոմունալ ծառայություններին, 0,4%-ը՝ շրջակա միջավայրի պահպանությանը, 4,2%-ը՝ հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր:

ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի փաստացի ծախսերը (գործառնական դասակարգմամբ) բոլոր տասնմեկ բաժիններում կատարողականը նախատեսվածից ցածր է, ընդ որում, ամենացածր կատարողականը արձանագրվել է «Շրջակա միջավայրի պաշտպանություն» բաժնում՝ 70.2%, իսկ ամենաբարձրը՝ 99.4% «Սոցիալական պաշտպանություն» բաժնում, իսկ ծրագրերից ամենացածր՝ 4.5% կատարողական է արձանագրվել Հոլանդական դրամաշնորհի հաշվին ֆինանսավորվող Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Դատաիրավական բարեփոխումների երկրորդ ծրագրով»:

Ըստ Հաշվետվության, ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի փաստացի ծախսերի (ներառյալ՝ արտաբյուջետային հաշիվների միջոցների տնօրինման արդյունքում կատարված ծախսերը) կառուցվածքը տնտեսագիտական դասակարգմամբ հետևյալն է. 88.52%-ն ուղղվել է ընթացիկ ծախսերի ֆինանսավորմանը, 11.48%-ը՝ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններն են:

2007 թվականի համեմատ, 2008 թվականի ՀՀ պետական բյուջեի ծախսերն աճել են 16.8%-ով:

2008 թվականին ընթացիկ ծախսերը Օրենքով նախատեսվել է 655,059.368.5 հազ. դրամ, որը բյուջետային տարվա ընթացքում ավելացվել է 12.2%-ով, որը հիմնականում պայմանավորված է 18.7%-ով «Աշխատանքի վարձատրություն», 319.6%-ով «Սուբսիդիաներ» և 21%-ով «Դրամաշնորհներ» հոդվածների ծախսերի ավելացմամբ: 2008 թվականին փաստացի ընթացիկ ծախսերը կազմել է 717,509,700.6 հազ. դրամ կամ Օրենքով հաստատված ցուցանիշի նկատմամբ կատարվել են 109.5%-ով, իսկ ճշտված ծրագրի նկատմամբ՝ 97.6%-ով: 2008 թվականին ընթացիկ ծախսերի հիմնականում բոլոր հոդվածներով արձանագրվել է նախատեսվածից ցածր կատարողական:

2008 թվականի պետական բյուջեից 87.7 մլրդ դրամը տրամադրվել է սուբսիդիաներին, որից՝ 65.669,019.5 հազ. դրամը ՀՀ կառավարության 06.04.2006թ. N 449-Ն որոշման համաձայն տրամադրվել է «ՀայՌ-ուսգազարդ» ՓԲԸ-ին՝ գազի սպառողների վրա սակագնի ազդեցությունը մեղմելու նպատակով հատկացված գումարն է, որի արդյունքում 2007 թվականի համեմատ՝ պետական բյուջեից տրամադրված սուբսիդիաների գումարն աճել է չորս անգամ:

Հաշվետու տարում պետական բյուջեից տրամադրվել են 83,177,475.3 հազ. դրամի դրամաշնորհներ, որից՝ 2,498,004.7 հազ. դրամը օտարերկրյա պետություններին և միջազգային կազմակերպություններին, 70,519,329.7 հազ. դրամը կամ 84.8%-ը հատկացվել են ընթացիկ դրամաշնորհներ պետական հատվածի այլ մակարդակներին և 10,160,140.9 հազ. դրամի կապիտալ դրամաշնորհները պետական հատվածի այլ մակարդակներին:

Ընթացիկ դրամաշնորհներից՝ 20,981,487.8 հազ. դրամը ուղղվել է համայնքների բյուջեներին համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիաներին, 10,885,902.2 հազ. դրամը՝ պետական ոչ առևտրային կազմակերպություններին, պետական առևտրային կազմակերպություններին՝ 5,601,767.9 հազ. դրամ, իսկ այլ ընթացիկ դրամաշնորհները կազմել է՝ 28,833,900.7 հազ. դրամ, որից՝ 21,996,819.9 հազ. դրամը ավելացած արժեքի հարկի գերավճարի գումարների վերադարձի համար տրամադրված գումարն է:

2008 թվականի ընթացքում պետական առևտրային կազմակերպություններին տրամադրված դրամաշնորհի գումարը կազմել է՝ 5,601,767.9 հազ. դրամ կամ նախատեսվածի 98.12%-ը, որից՝ 2,302,187.6 հազ. դրամը կամ 36.6%-ը տրամադրվել և օգտագործվել է «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի կողմից:

2008 թվականի ՀՀ պետական բյուջեի ծախսերի 25.7%-ը կամ 207,937,180.0 հազ. դրամ կազմել են սոցիալական նպաստները և կենսաթոշակները:

«Այլ ծախսեր» հոդվածով հատկացվել է՝ 128,171,063.0 հազ. դրամ, որից՝ 93,8%-ը կամ 120,168,569.8 հազ. դրամը այլ ծախսերի «այլ ծախսերն» են:

2008 թվականին «Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ» հողվածով ծախսերը Օրենքով նախատեսվել է 166,995,009.8 հազ. դրամ, որը բյուջետային տարվա ընթացքում պակասեցվել է 41,537,879.4 հազ. դրամով կամ նվազեցվել է 24.9%-ով, ճշտված ծրագրով կազմել է 125,457,130.4 հազ. դրամ և փաստը կազմել է 93,064,823.2 հազ. դրամ: Պետք է նշել, որ բյուջետային տարվա ընթացքում Օրենքով նախատեսված ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը և դրանց օտարումից մուտքերը չեն պակասեցվել, այլ ավելացվել է համապատասխանաբար՝ 39,206,630.1 հազ. դրամով և 80,744,509.5 հազ. դրամով (ավելացվել է 11 անգամ), և ճշտված ծրագիրը համապատասխանաբար կազմել են՝ 214,237,072.9 հազ. դրամ և 88,779,942.5 հազ. դրամ, իսկ ոչ ֆինանսական ակտիվների գծով փաստացի ծախսերը և դրանց օտարումից մուտքերը համապատասխանաբար կազմել են՝ 181,689,684.6 հազ. դրամ և 88,624,861.4 հազ. դրամ: Վերլուծության արդյունքում պարզվել է, որ բյուջետային տարվա ընթացքում Օրենքով նախատեսված ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերը կատարվել է 99.83%-ով ՀՀ կառավարության 06.04.2006թ. N 449-Ն որոշման 4.4 կետի համաձայն «ՀայՌ-ուսգազարդ» ՓԲԸ-ն Հրազդանի 5-րդ էներգաբլոկի վաճառքից, ՀՀ պաշտպանության նախարարության արտաբյուջետային հաշվին մուտքագրվել է 67,466,980.0 հազ. դրամ: Հաշվետվությունում, մասնավորապես՝ ՀՀ պաշտպանության նախարարության արտաբյուջետային միջոցների գոյացման և տնօրինման մասին հաշվետվությունում, ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերում տրված է միայն 65.669,019.5 հազ. դրամը, իսկ 1,797,960.5 հազ. դրամ է տրված ՀՀ 2008 թվականին պետական բյուջեի ՀՀ պաշտպանության նախարարության ծրագրերի ծախսերում «Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքեր» անվամբ ծրագրում (ծախսերի տնտեսագիտական հողվածի անվամբ): Ըստ Հաշվետվության ՀՀ կառավարության 25.12.2008թ. N 1580-Ն որոշման համաձայն 1,797,960.5 հազ. դրամը արտացոլվել է ՀՀ պաշտպանության նախարարության ծախսերում (բացասական նշանով), մինչդեռ «Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքեր» հաշվում վերջինս հաշվառվել է «Այլ մարմիններ» գերատեսչական դասակարգման մուտք:

ՀՀ 2008 թվականին պետական բյուջեի ծախսերի (գերատեսչական դասակարգմամբ) վերլուծությունը ցույց է տվել, որ Հաշվետվությունում տրված երեսունհինգ գերատեսչություններում, որոնցում տարվա ընթացքում կատարվել են 01010303՝ «Արտասահմանյան պատվիրակությունների ընդունելություն» և 01010304՝ «Արտասահմանյան պաշտոնական գործուղումներ» ծրագրերով ծախսեր, այդ գերատեսչությունների ծախսերի կատարողականները ճիշտ չի արտահայտում իրական պատկերը: Այդ ծրագրերը Օրենքով նախատեսվում են և տարվա ընթացքում, անհրաժեշտությունից

ելնելով, ՀՀ կառավարությունը (այն դեպքերում, երբ ՀՀ պետական բյուջեից նախատեսված հատկացումների վերաբաշխման իրավասությունը օրենքով վերապահված է ՀՀ կառավարությանը) բաշխում է ըստ գերատեսչությունների, սակայն ըստ գերատեսչությունների բաշխելիս չի տրվում պլանի ճշտում, որի արդյունքում ճիշտ չեն արտահայտվում Հաշվետվությունում տրված երեսունհինգ գերատեսչությունների (այդ թվում՝ վեց գերատեսչություններում արձանագրվել է գերածախս) ծախսերի կատարողականները, այսինքն՝ ըստ գերատեսչությունների այդ ծրագրերի ճշտում չտալու հետևանքով ծախսերի կատարողականները ավելի բարձր են իրականից: Օրինակ՝ Հաշվետվությունում 2008 թվականի ընթացքում ՀՀ արտաքին գործերի նախարարության «Պետական արարողակարգի ծառայություն» գործակալությունը՝ «Արտասահմանյան պատվիրակությունների ընդունելություն» ծրագրով կատարել է 28.766.1 հազ. դրամի ծախս, որի համար չի տրվել ծրագրի ճշտում, և արդյունքում ծախսի կատարողականը կազմել է 119.74%, սակայն գերատեսչության ծրագրերի ճշտման դեպքում գերատեսչության ծախսերի կատարողականը կկազմի 98.3%, այսինքն՝ կտրվեր ծախսերի ճիշտ կատարման պատկերը:

ՀՀ 2008 թվականին պետական բյուջեի ծախսերի (գերատեսչական դասակարգմամբ) վերլուծությունը ցույց տվեց, որ ընդամենը փաստացի ծախսերից 56.43%-ը բաժին է ընկնում չորս նախարարություններին: Դրանք են՝

1. ՀՀ 2008 թվականին պետական բյուջեի փաստացի ընդամենը ծախսերի 45.2%-ը բաժին է ընկնում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը, այդ թվում՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պահպանմանն ու նրա կողմից իրականացվող ծախսերին՝ 4.98%-ը և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայությանը՝ 20.51%-ը: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը Օրենքով նախատեսվել է հատկացնել 41,679,337.1 հազ. դրամ, ճշտված ծրագրով 40,520,041.2 հազ. դրամ և փաստացի ծախսը կատարվել է 40,374,009.2 հազ. դրամի չափով կամ ճշտված ցուցանիշի 99.64 %-ը: 2008 թվականին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը հատկացված միջոցների փաստացի ծախսերը 2007 թվականի համեմատ աճել է 12%-ով:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայությանը հատկացված միջոցների օգտագործմանը՝ Օրենքով նախատեսվել է հատկացնել 170,746,139.3 հազ. դրամ, ճշտված ծրագրով 166,983,704.0 հազ. դրամ և փաստացի ծախսը կատարվել է 166,232,128.08 հազ. դրամի չափով կամ ճշտված ցուցանիշի 99.55 %-ը:

2. ՀՀ 2008 թվականին պետական բյուջեի փաստացի ընդամենը ծախսերի 15.74%-ը բաժին է ընկնում ՀՀ պաշտպանության նախարարությանը հատկացված միջոցների օգտագործմանը՝ Օրենքով նախատեսվել է հատկացնել 125,069,156.7 հազ. դրամ, ճշտված ծրագրով՝ 131,845,826.3 հազ. դրամ և փաստացի ծախսը կատարվել է 127,564,561.6 հազ. դրամի չափով կամ ճշտված ցուցանիշի 96,75 %-ը: Ճշտված ծրագրի նկատմամբ նախատեսվածից ցածր կատարողականը պայմանավորված է «Ռազմական կարիքների բավարարում» ծրագրի թերակատարմամբ՝ 4,244,667.1 հազ. դրամով: 2008 թվականին ՀՀ պաշտպանության նախարարությանը հատկացված միջոցների փաստացի ծախսերը 2007 թվականի համեմատ աճել է 26%-ով:

3. 2008 թվականին ՀՀ ֆինանսների նախարարության ծախսը պետական բյուջեի ամբողջ փաստացի ծախսերի 9.07%-ն է, որը Օրենքով նախատեսվել է 67,614,914.4 հազ. դրամ, ճշտված ծրագրով՝ 76,167,724.5 հազ. դրամ: ՀՀ ֆինանսների նախարարության փաստացի ծախսերը կազմում են 73,508,245.67 հազ. դրամ կամ Օրենքով նախատեսվածի 108.72%-ը, ճշտված ծրագրի 96.51%-ը:

4. 2008 թվականին գերատեսչություններից փաստացի ընդամենը ծախսերի 6.13%-ը բաժին է ընկել ՀՀ առողջապահության նախարարությանը հատկացված միջոցների օգտագործմանը՝ Օրենքով նախատեսվել է հատկացնել 53,844,695.0 հազ. դրամ, ճշտված ծրագրով 54,036,893.7 հազ. դրամ և փաստացի ծախսը կատարվել է 49,688,232.0 հազ. դրամի չափով կամ ճշտված ցուցանիշի 91,95 %-ը: 2008 թվականին ՀՀ առողջապահության նախարարությանը հատկացված միջոցների փաստացի ծախսերը 2007 թվականի համեմատ աճել է 8.4%-ով:

2008 թվականին գերատեսչություններից ճշտված ծրագրի նկատմամբ ամենացածր կատարողական է արձանագրվել «ՀՀ կառավարության աշխատակազմ» գերատեսչությունում, այսպես՝ Օրենքով նախատեսվել է հատկացնել 26,197,371.9 հազ. դրամ, ճշտված ծրագրով 31,752,250.3 հազ. դրամ և փաստացի ծախսը կատարվել է 16,974,978.2 հազ. դրամի չափով կամ ճշտված ցուցանիշի 53.46 %-ը: Թերակատարումը պայմանավորված է «Հազարամյակի մարտահրավեր» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում նախատեսված, սակայն ոչ լրիվ կատարված ծախսերով:

2008 թվականի ՀՀ պետական բյուջեի ծախսերի (գերատեսչական դասակարգմամբ) ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ բյուջետային տարվա ղեկտեմբերի 31-ի դրությամբ արձանագրված որոշ գերատեսչությունների ծրագրերի գծով դրամարկղային ծախսերը փաստացի ծախսերից ավելի են 24,927,118.66 հազ. դրամով, իսկ 19,353,872.7 հազ. դրամի չափով փաստացի դրամարկղային ծախսերը փոքր են փաստացի ծախսերից: Հաշվետվությունը՝ ներկայացված է դրամարկղային սկզբունքով,

կազմված է ամփոփ ցուցանիշների վրա, որոնք չեն արտացոլում պատկերը ըստ գործարքների, որն էլ հնարավորություն չի տալիս իրականացնել պետական ֆինանսների կառավարման արդյունավետության գնահատում:

Ըստ Հաշվետվության, 2008 թվականին ՀՀ կառավարության կողմից ընդունված որոշումների համաձայն պետական հիմնարկների համար բացված արտաբյուջետային հաշիվների միջոցների շրջանառության փաստացի ծախսերը կազմել են 13,664,332.4 հազ. դրամ կամ ճշտված ծրագրայինի 78.77%:

2008 թվականի նոյեմբերի 20-ին Հայաստանի Հանրապետությունում շարժական կապի գլոբալ համակարգի ծառայությունների մատուցման երրորդ օպերատոր՝ «Օրանժ»-ը (մրցույթում հաղթած), գործունեության լիցենզիայի և ռադիոհաճախականության օգտագործման թույլտվություն տրամադրելու համար վճարել է 51.5 մլն եվրո: ՀՀ կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի թիվ 1321-Ա որոշման (այսուհետ՝ Թիվ 1321-Ա որոշում) 1 կետի համաձայն մրցույթի գումարի հաշվեգրման նպատակով ՀՀ ֆինանսների նախարարությունում պետք է բացվեր արտաբյուջետային հաշիվ, սակայն բացվել է դեպոզիտային հաշիվ և մրցույթի 19,745,100. 0 հազ. դրամ գումարը հաշվեգրվել է ՀՀ ֆինանսների նախարարության դեպոզիտային հաշվին:

Համաձայն ՀՀ կառավարության 2008 թվականի նոյեմբերի 20-ի թիվ 1367-Ա որոշման 50 մլն ԱՄՆ դոլարին համարժեք 15,250,000.0 հազ. դրամ է ուղղվել Գերմանական հիմնադրամի կողմից իրականացվող մասնավոր փոքր և միջին ձեռներեցության զարգացման վարկային ծրագրի վարկավորման բաղադրիչի համաֆինանսավորմանը և գումարը փոխանցվել է ՀՀ կենտրոնական բանկում ՀՀ ֆինանսների նախարարության 103004400018 բանկային հաշվին, որի գումարները չեն շրջանառվում միասնական գանձապետական (103004200012) հաշվով, որն էլ հնարավորություն չի տալիս իրականացնել պետական ֆինանսների կառավարման արդյունավետության գնահատում (գործարքի մակարդակով):

Համաձայն ՀՀ կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի թիվ 1321-Ա որոշման 2 կետի, մնացորդը ենթակա է հաշվեգրման ՀՀ պետական բյուջեի եկամուտներին, սակայն 2009 թվականի հունվարի 1-ի դրությամբ դեպոզիտային հաշվի մնացորդը, որը կազմել է 2,068,231.207 հազ. դրամ, չի հաշվեգրվել ՀՀ պետական բյուջեի եկամուտներին:

2008 թվականի Երևանի քաղաքապետարանի «Արտաբյուջետային միջոցների գոյացման և տնօրինման մասին» հաշվետվությունում արտաբյուջետային միջոցների դիտարկվող ժամանակահատվածի սկզբի մնացորդ կազմել է 2,784.0 հազ. դրամ, իսկ տարեվերջին՝ զրո: Ուսումնասիրություններից պարզվել է, որ չնայած այն բանին, որ 2006-

2008 թվականներին Երևանի քաղաքապետարանի արտաբյուջետային միջոցների տնօրինման և օգտագործման համար արտաբյուջետային հաշիվներում մուտքագրվել և ելքագրվել են գումարներ, այսինքն՝ առկա է շրջանառություն: Արձանագրվել է, որ.

1. Արտաբյուջետային հաշվով գումարներ են շրջանառվում: Օրինակ՝ արտաբյուջետային հաշվի մնացորդը 2006 թվականի տարեվերջին կամ 2007 թվականի տարեկզբին կազմել է՝ 4,315,760.861 հազ. դրամ, 2007 թվականի տարեվերջին կամ 2008 թվականի տարեկզբին՝ 3,895,915.650 հազ. դրամ և 2008 թվականի տարեվերջին՝ 2,355,605.925 հազ. դրամ:

2. 2008 թվականի ընթացքում արտաբյուջետային հաշվին մուտքագրվել է 17,095.061 մլն դրամ և ելքագրվել է 18,635.371 մլն դրամ, կամ ելքագրվել է 1,540.310 մլն դրամ ավելի, քան մուտքագրվել է, այսինքն՝ այդ գումարի չափով օգտագործվել է արտաբյուջետային հաշվի 2008 թվականի տարեկզբի մնացորդի գումարները:

3. 2008 թվականի ընթացքում արտաբյուջետային հաշվին ելքագրված գումարից՝ 17,820.0 մլն դրամի ելքագրման իրավական հիմք է նշվել ՀՀ կառավարության 08.04.2004 թվականի թիվ 542- որոշմամբ, որը ընդունվել է ՀՀ 2004թվականի պետական բյուջեի մասին ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու համար և չի կարող հիմք հանդիսանալ 2008 թվականին կատարվող գործարքների համար:

4. 2008 թվականին արտաբյուջետային միջոցների գումարներն օգտագործվել են վճարման հանձնարարագրի հիման վրա՝ հիմք ընդունելով քաղաքապետարանի որոշումները: Երևանի քաղաքապետարանի արտաբյուջետային հաշվից 2008 թվականի ընթացքում հողերի վաճառքի գումարներից հետ է վերադարձվել 812,586.622 հազ. դրամ և «Պետական սեփականություն համարվող հողի վաճառքից մուտքեր» հաշվին փոխանցվել է 18,712,936.259 հազ. դրամ, որն էլ օգտագործվել է Երևանի համաքաղաքային նշանակության ծախսեր իրականացնելու համար:

2008 թվականին բյուջետային տարում կնքված պայմանագրերով պետական կարիքների համար նախատեսվել է իրականացնել 348,323,155.52 հազ. դրամի գնումներ (առանց արտաքին վարկերի և դրամաշնորհների ծրագրերի գնումների), սակայն փաստացի դրամարկղային ծախսը կազմել է 336,872,618.25 հազ. դրամ:

Վերահսկիչ պալատի կարծիքով, Հաշվետվությունը պետք է պարունակի գնումների գործընթացի վերաբերյալ համապատասխան տվյալներ՝ ըստ գործարքների, որը հնարավորություն կտար գնահատել Հայաստանի Հանրապետությունում պետական կարիքների համար իրականացվող գնումների արդյունավետությունը:

2008 թվականի պետական բյուջեի պակասուրդի վերաբերյալ

2008 թվականի պետական բյուջեի պակասուրդի փաստացի ֆինանսավորումը կազմել է 25,219,492.0 հազ. դրամ: 2007 թվականի համեմատ, 2008 թվականին պակասուրդի մեծությունը աճել է 19.7%-ով, որը հիմնականում պակասուրդի ֆինանսավորման ներքին աղբյուրների մեծության 1.5 անգամ աճի արդյունք է: ՀՆԱ-ի նկատմամբ 2008 թվականի պակասուրդը կազմում է 0.69% (2007թ` 0.67%):

2008 թվականի պետական բյուջեի պակասուրդը Օրենքով նախատեսվել է ֆինանսավորել 76,048,910.8 հազ. դրամով: 2008 թվականի ընթացքում ՀՀ կառավարությունն իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում պակասուրդի ֆինանսավորման մեծությունը նվազեցրել է 19,075,923.3 հազ. դրամով և ճշտված ծրագիրը կազմել է 56,972,978.5 հազ. դրամ: Կատարողականը Օրենքով հաստատված ցուցանիշի նկատմամբ կազմել է 33.2%, իսկ ճշտված ծրագրի նկատմամբ` 44.3%:

2008 թվականին պակասուրդի ֆինանսավորման ներքին աղբյուրները Օրենքով նախատեսվել են 46,514,004.1 հազ. դրամ, տարվա ընթացքում կատարվել են փոփոխություններ, և ներքին աղբյուրներից ֆինանսավորման գումարը պակասեցվել է 18,338,879.7 հազ. դրամով, որի արդյունքում պակասուրդի ֆինանսավորման ներքին աղբյուրների ճշտված ծրագիրը կազմել է 28,175,124.4 հազ. դրամ: Փաստացի այս ցուցանիշը կազմել է 7,791,676.3 հազ. դրամ կամ Օրենքով հաստատված ցուցանիշի նկատմամբ 16.75%, իսկ ճշտված ծրագրի նկատմամբ` 27.7%: Նախատեսվածից ցածր կատարողականը պայմանավորված է վարկերի և փոխառությունների պակաս տրամադրմամբ, ինչպես նաև 2008 թվականի ազատ մնացորդի միջոցների ավելացմամբ:

2008 թվականի ընթացքում պետական բյուջետային միջոցների ազատ մնացորդի փոփոխությունը կազմել է 23,432.1 մլն դրամ, այդ թվում`

45.9 մլն դրամ` գանձապետական միասնական հաշվի մնացորդի փոփոխություն,
որից`

(9,666.4) մլն դրամ` ԿԳ-ում դեպոզիտի փոփոխություն,

(5,994.4) մլն դրամ` կենսաթոշակային ֆոնդի փոփոխություն,

(3,996.3) մլն դրամ` տեղական բյուջեի փոփոխություն,

(1,238.8) մլն դրամ` արտաբյուջեի փոփոխություն,

(527.2) մլն դրամ` մոնետիզացման հաշիվների փոփոխություն,

21,468.9 մլն դրամ` պետական բյուջեի միջոցների փոփոխություն,

այդ թվում`

(758.2) մլն դրամ` միջանկյալ հաշվի փոփոխություն,

(11,225.6) մլն դրամ՝ 2008 թվականի տարեսկզբի ազատ մնացորդ,

11,629.2 մլն դրամ՝ ՀՀ պետական հիմնարկների արտաբյուջետային հաշիվների մնացորդի փոփոխություն,

9.8 մլն դրամ՝ ՀՀ պետական հիմնարկների արտաբյուջետային հաշիվների մնացորդից փոխանցում,

450.9 մլն դրամ՝ ֆինանսավորման և դրամարկղային ծախսերի տարբերություն,

340.7 մլն դրամ՝ տրամադրված վարկերի և փոխատվությունների վերադարձից մուտքեր դուարային հաշվին:

Ուումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ ՀՀ պետական բյուջետային միջոցների 2008 թվականի տարեսկզբի ազատ մնացորդը կազմում է 76,256.4 մլն դրամ:

2008 թվականին ՀՀ պետական բյուջեի պակասուրդի արտաքին աղբյուրի փաստացի ֆինանսավորման կատարողականն ունի հետևյալ պատկերը.

- 2008 թվականին պետական բյուջեի պակասուրդի արտաքին աղբյուրներում՝ արտաքին վարկերի ստացման փաստացի ընդհանուր գումարը դրամով արտահայտված՝ 49,292,505.4 հազ. դրամ է, որը կազմում է Օրենքով նախատեսվածի 83.9%-ը, այսինքն՝ ներգրավվել է Օրենքով նախատեսվածից պակաս 9,472,826.32 հազ. դրամով, իսկ ճշտված ծրագրի 83.7%-ը, այսինքն՝ ներգրավվել է ճշտված ծրագրով նախատեսվածից 9,612,234.2 հազ. դրամով պակաս:
- Միջազգային կազմակերպությունների կողմից փաստացի տրամադրվել է 29,518,465.01 հազ. դրամ, որը կազմում է Օրենքով նախատեսվածի 81.2%-ը:
- Օտարերկրյա պետությունների կողմից փաստացի տրամադրվել է՝ 19,774,040.5 հազ. դրամ կամ Օրենքով նախատեսվածի 88.2%-ը, շեղումը կազմել է (2,651,595.63) հազ. դրամ:
- Օրենքով նախատեսված 32 վարկային ծրագրերից չորսով՝ «Երկաթուղու կոնցեսիայի անցման ընթացքում ներդրումային ծրագիր», «Երթևեկության կառավարման և անվտանգության ծրագիր», «Մեանա լճի բնապահպանական ծրագիր» և «Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման ծրագրին տրամադրվող տեխնիկական աջակցության ծրագիր»՝ 1,027,213.0 հազ. դրամ նախատեսված ընդհանուր գումարով փաստացի չեն ստացվել:
- Օրենքով նախատեսված 9 վարկային ծրագրով՝ 4,481,545.62 հազ. դրամ ավելի է ստացվել:

- 2008 թվականին պետական բյուջեի պակասուրդի արտաքին աղբյուրների 20 վարկային ծրագրերով ստացվել է Օրենքով նախատեսված ցուցանիշից 13,580,062.2 հազ. դրամով պակաս:
- Օրենքով չնախատեսված մեկ վարկային ծրագրով միջազգային համաձայնագրերի շրջանակներում ստացվել է 112,788.0 հազ. դրամ: ՀՀ կառավարության կողմից 2008 թվականին Օրենքով չնախատեսված արտաքին վարկերը կազմել են փաստացի ստացվածի 0.25%-ը: Այդ վարկն է «Ջրային սեկտորի զարգացման ծրագիր II (համայնքային ենթակառուցվածք-Արմավիր)»:
- 2008 թվականին Օրենքով նախատեսվել է 22 վարկային ծրագրի գծով մարել 4,758,066.3 հազ. դրամ և փաստացի մարվել է 4,881,563.3 հազ. դրամ: Մեկ վարկային ծրագրի՝ «Լինսի հիմնադրամի վարկային ծրագիր» գծով մարումը Օրենքով չի նախատեսվել, բայց փաստացի մարվել է 76,455.0 հազ. դրամի չափով:

«Հայաստանի Հանրապետության 2007 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ» տարեկան հաշվետվության մասին եզրակացությունում ՀՀ վերահսկիչ պալատը արձանագրել է, որ հաշվետվությունում արտաքին վարկերի օգտագործումն ու ստացումը հաշվարկվել է արտաքին վարկերի օգտագործման ու ստացման օրվա՝ տվյալ արտաքին վարկերի համապատասխան արտարժույթի նկատմամբ Հայաստանի Հանրապետության դրամի փոխարժեքով, իսկ սպասարկումը և մարումը՝ ֆիքսված փոխարժեքով: Հաշվետվությունում պետկերը նույնն է:

ՀՀ վերահսկիչ պալատի կողմից բազմիցս արձանագրվելուց հետո էլ միջազգային համաձայնագրերի շրջանակներում Հայաստանի Հանրապետությանը տրամադրված բոլոր բյուջետային միջոցների շրջանառումը գանձապետական միասնական հաշվով չի կատարվում: Գործող բոլոր ԾԻԳ-երի հաշիվները մինչ օրս գտնվում են առևտրային բանկերում:

2008 թվականի ՀՀ պետական պարտքի վերաբերյալ

2009 թվականի հունվարի 1-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության պետական պարտքը կազմել է 584,577.07 մլն դրամ, կամ 1,906.03 մլն ԱՄՆ դոլար (ՀՆԱ-ի 16.02 % (2005թ.՝ 24.34%, 2006թ.՝ 19.15%, 2007թ.՝ 16.4%))¹, այդ թվում՝ ՀՀ ներքին պետական պարտքը՝ 100,893.19 մլն դրամ, կամ 328.93 մլն ԱՄՆ դոլար (ՀՆԱ-ի 2.8% (2005թ.՝ 2.29%, 2006թ.՝ 2.66%, 2007թ.՝ 2.39%)) և ՀՀ արտաքին պետական պարտքը՝

¹ Հաշվարկը կատարվել է ՀՀ դրամով:

483,743.88 մլն դրամ, կամ 1,577.100 մլն ԱՄՆ դոլար (ՀՆԱ-ի 13.25% (2005թ.՝ 22.1%, 2006թ.՝ 16.49%, 2007թ.՝ 14%)):

2008 թվականին ՀՀ պետական պարտքում ՀՀ արտաքին պետական պարտքը կազմել է 82.7%, իսկ ՀՀ ներքին պետական պարտքը՝ 17.3%:

2008 թվականի ՀՀ արտաքին պարտքի բեռը բնութագրող մակրոտնտեսական ցուցանիշների վերլուծությունից պարզվել է, որ թեև Հայաստանի Հանրապետությունը նվազ պարտքի բեռ ունեցող երկիր է, այդուհանդերձ, մեկ ցուցանիշի արդյունքով այն դասակարգվել է միջին պարտքի բեռ ունեցող երկրների խմբում (տես՝ Աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Հայաստանի Հանրապետության արտաքին պետական պարտքի բեռը բնութագրող մակրոտնտեսական ցուցանիշները

Ցուցանիշի անվանումը	Ցուցանիշների սահմանները՝ ըստ դասակարգման խմբերի	Փաստացի ցուցանիշներ									
		2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008	
ԶՆԱ/ՀՆԱ	Առավել ծանր պարտքի բեռ ունեցող երկրներ 80% և ավելի										
	Միջին պարտքի բեռ ունեցող երկրներ 48%-80%										
	Նվազ պարտքի բեռ ունեցող երկրներ մինչև 48%	28%	28%	28%	26%	21%	14%	11%	9.0%	8.3%	
ԶՆԱ/ Արտահանում	Առավել ծանր պարտքի բեռ ունեցող երկրներ 220% և ավելի										
	Միջին պարտքի բեռ ունեցող երկրներ 132%-220%										
	Նվազ պարտքի բեռ ունեցող երկրներ մինչև 132%	122%	111%	98%	82%	75%	53%	49.7%	46.9%	56.2%	
Արտաքին պարտքի սպասարկում /Արտահանում	Առավել ծանր պարտքի բեռ ունեցող երկրներ 25.9%										
	Միջին պարտքի բեռ ունեցող երկրներ 23.45%	11%	10%	10%	16%	10%					
	Նվազ պարտքի բեռ ունեցող երկրներ 7.8%						4.6%	4.20%	2.9%	3.1%	
Տոկոսավճար /Արտահանում	Առավել ծանր պարտքի բեռ ունեցող երկրներ 11.65%										
	Միջին պարտքի բեռ ունեցող երկրներ 9.85%										
	Նվազ պարտքի բեռ ունեցող երկրներ 3.6%	3%	4%	3%	1%	1%	0.90%	0.70%	0.6%	0.7%	

Արտաքին պարտք/Արտահանում	Առավել ծանր պարտքի բեռ ունեցող երկրներ 387.95%									
	Միջին պարտքի բեռ ունեցող երկրներ 209.00%	196%	171%	149%	123%	120%	82%	86%	82%	89%
	Նվազ պարտքի բեռ ունեցող երկրներ 64.00%									
Արտաքին պարտք/ՀՆԱ	Սահման 50.00%	45%	43%	43%	39%	33%	22%	19%	16%	13%

Ելնելով վերոնշյալից, Վերահսկիչ պալատը գտնում է.

ՀՀ կառավարության կողմից Ազգային ժողով ներկայացված՝ «Հայաստանի Հանրապետության 2008 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ» տարեկան հաշվետվությունում եկամուտներին, ծախսերին և պակասուրդին ամրագրված ցուցանիշներն արտացոլում են պետական բյուջեի փաստացի կատարողականը: